**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2**
**ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/10 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ**
**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

**ք. Երևան** **09 ապրիլի 2026թ.**

2026թ-ի մարտի 30-ից ապրիլի 9-ը, ՀՀ, ք. Երևան Օրբելի եղբայրների 22 հասցեում գտնվող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի շենքում տեղի ունեցավ գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերման ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/10 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ա. Մովսիսյան՝ | Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի տեղակալ, |
| Տ. Աբրահամյան՝ | Երևանի պետական համալսարանի Ֆիզիկատեխնիկական լաբորատորիայի վարիչ, |
| Ա. Բաբաջանյան՝ | Երևանի պետական համալսարանի ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցությունների ամբիոնի վարիչ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Մովսիսյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, Ա. Առաքելյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ**

1. Գնման հայտով սահմանված՝ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների, աճուրդի առաջարկված մեկնարկային գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:
2. Ընթացակարգին հայտ ներկայացված մասնակիցների և ներկայացված հայտերը գնահատելու մասին:
3. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների մասին:
4. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:
5. Համակարգի միջոցով գեներացված հայտարարություն/ներ/ի և անգործության ժամանակահատված կիրառելու կամ չկիրառելու մասին:

ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ՄՈՒՏՔ № Մ-27379
«09» 04 2026

6. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ, ԱՃՈՒՐԴԻ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ-ի մարտի 30-ին, ՀՀ, ք. Երևան Օրբելի եղբայրների 22 հասցեում գտնվող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե-ի շենքում ժամը 12:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված տեղեկացրեց, որ գնման գործընթացն իրականացվում է ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն և հրապարակեց գնման հայտով սահմանված ձեռքբերվող գնման առարկա/ներ/ի գնման գինը/գները.

ՀՀ դրամ

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Աճուրդի մեկնարկային գին | Մեկնարկ | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| 1 | Շարժական կապի և իրերի ինտերնետի համալիր լաբորատորիա մինչև 110 ԳՀց | 44,517,860.00 | 31.03.2026 12:00:00 | 398,100,000.00 |

ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/10 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի ներկայացումն ու բացումը, ինչպես նաև՝ հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով՝ հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

Հանձնաժողովը որոշեց:

1. Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 2.ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/10 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցե, հեռ. | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|
| 1 | Shanxi laboratory Equipment CO LTD | - | - | - |
| 2 | Էյչ Գրուպ ՍՊԸ | ՀՀ, ք.Երևան, Բաշինջաղյան 1 փ, 13/30, +374 91 40 40 73 | khv_84@mail.ru , eychgroup@gmail.com | 01254973 |
| 3 | Լոկատոր ՓԲԸ | ք. Երևան, Աղոնցի 4/3, +374 10 28 58 28 | tender@locator.am | 00095651 |
| 4 | «Ռեֆորս Գրուպ» ՍՊԸ | ՀՀ, 0038, Երևան, Արելյան փող., 6/4 շենք, TGA Բիզնես Կենտրոն 3-րդ հարկ, 310 սենյակ, | reforcegroupllc@gmail.com | 00179816 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | +374 41 40 41 21 | | |
| 5 | Armgate SIA | 20 Liliju st. Marupe, LV-2157, Latvia, +37126583498 | vasilijs@armgate.lv | LV500320853 1 |
| 6 | Iennakan | - | BVB-123@mail.ru | 012231296 |
| 7 | Prederiksoans LSD | Aljir, +3734511552212 | prederiksoans@gmail.com | 155354 |
| 8 | IT Technology LLC | 28, Hadikgasse, 1140 Vienna, Austria, +43-1-5248479,210 | arsensmbatyan91@gmail.c om | 46565555 |

2026 թվականի մարտի 31-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ՝ համակարգի միջոցով գնահատման մեջ ներառված.

1. Հայտերը կազմվել և ներկայացվել են ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/10 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան.

2. Ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, բացառությամբ. Shanxi laboratory Equipment CO LTD-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված վավերապայմաններին, մասնավորապես՝

- Բացակայում է Հավելված 1-ով ներկայացվող դիմում հայտարարության փաստաթուղթը,
- Բացակայում է հավելված 1.3-ով ներկայացվող իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը,
- Բացակայում է պահանջվող ապրանքի հայերեն ամբողջական տեխնիկական բնութագիրը,
- Բացակայում է Ընթացակարգի հրավերով պահանջվող հայտի ապահովման փաստաթուղթը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026 թվականի մարտի 31-ին, Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների նախնական և վերջնական գնային առաջարկները.

Ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների՝ ընտրված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

| Հ/Հ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Կարգավիճակ /լրացվում է հայտերի գնահատման վերջնարդյունքում/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | Ընտրված մասնակից «X» |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Shanxi laboratory Equipment CO LTD | 398,100,000.00 | 118000 ԱՄՆ ԴՈԼԼԱՐ | 0% | 118000 ԱՄՆ ԴՈԼԼԱՐ | 44517860 ՀՀ ԴՐԱՄ | 0% | 44517860.00 ՀՀ ԴՐԱՄ | Գնահատվել է անբավարար և մերժվել է |
| | Էյչ Գրուպ ՍՊԸ | | 331695000 ՀՀ ԴՐԱՄ | 20% | 398034000 ՀՀ ԴՐԱՄ | 331695000 ՀՀ ԴՐԱՄ | 20% | 398034000.00 ՀՀ ԴՐԱՄ | |
| | Լոկատոր ՓԲԸ | | 331750000 ՀՀ ԴՐԱՄ | 20% | 398100000 ՀՀ ԴՐԱՄ | 331750000 ՀՀ ԴՐԱՄ | 20% | 398100000.00 ՀՀ ԴՐԱՄ | |
| | «Ռեֆորս Գրուպ» ՍՊԸ | | 333000000 ՀՀ ԴՐԱՄ | 20% | 399600000 ՀՀ ԴՐԱՄ | 333000000 ՀՀ ԴՐԱՄ | 20% | 399600000.00 ՀՀ ԴՐԱՄ | |
| | Armgate SIA | | 398100000 ՀՀ ԴՐԱՄ | 0% | 398100000 ՀՀ ԴՐԱՄ | 398100000 ՀՀ ԴՐԱՄ | 0% | 398100000.00 ՀՀ ԴՐԱՄ | |
| | Iennakan | | 450000000 ՀՀ ԴՐԱՄ | 20% | 540000000 ՀՀ ԴՐԱՄ | 450000000 ՀՀ ԴՐԱՄ | 20% | 540000000.00 ՀՀ ԴՐԱՄ | |
| | Prederiksoans LSD | | 477720000 ՀՀ ԴՐԱՄ | 0% | 477720000 ՀՀ ԴՐԱՄ | 477720000 ՀՀ ԴՐԱՄ | 0% | 477720000.00 ՀՀ ԴՐԱՄ | |

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

2026 թվականի ապրիլի 9-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

2. Shanxi laboratory Equipment CO LTD հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով Ընթացակարգի հրավերի 7.6 կետով սահմանված պահանջները:

3. Համակարգի կողմից գնահատման մեջ ներառված հայտերի գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

4. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Հ/Հ | Գնահատման մեջ ներառված մասնակցի անվանումը* | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1 | Shanxi laboratory Equipment CO LTD | անբավարար |

*Գնահատվում են միայն մասնակիցների կողմից ներկայացված այն հայտերը, որոնք համակարգի կողմից ներառվել են գնահատման ենթակա հայտերի մեջ:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համակարգի կողմից գնահատման մեջ ներառված միակ մասնակցի՝ Shanxi laboratory Equipment CO LTD-ի կողմից ներկայացված հայտը գնահատավել է անբարարա և մերժվել, Հանձնաժողովը որոշեց.

1. Ընթացակարգը հայտարարել չկայացած, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 5. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳԵՆԵՐԱՑՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ/ՆԵՐ/Ի և ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Ա. Առաքելյանը ներկայացրեց գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված գնահատումների արդյունքում՝ համակարգի կողմից տրամադրված հայտարարություն/ներ/ի տեքստ/եր/ը:

Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի 2) ենթակետով սահմանված պահանջների համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել համակարգի միջոցով գեներացվող հայտարարություն/ներ/ը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2. Հաստատել համակարգի կողմից տրամադրված հայտարարություն/ներ/ի տեքստ/եր/ը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 6. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:

2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ա. Մովսիսյան ________________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Տ. Աբրահամյան ________________

Ա. Բաբաջանյան ________________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Ա. Առաքելյան ________________